ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ XXVIII ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

2007 թ. հունիսի 14–15-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի երիտասարդ արևելագետների հանրապետական XXVIII գիտական նստաշրջանը: Հունիսի 14-ին կայացավ լիագումար նիստը, որին ներկա էին ՀՀ - ԳԱԱ հայագիտության և հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վ. Բարխուդարյանը, *ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն* Ռ. Սաֆրաստյանը, *ինստիտուտի գիտաշխատողներ, բուհերի ուսանողներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:*

Լիագումար նիստը բացեց արևելագիտության ինստիտուտի երիտասարդ արևելագետների խորհրդի նախագահ, պ. գ. թ. Գ. Գևորգյանը*: Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն* Ռ. Սաֆրաստյանը*: Այնուհետև լսվեցին մի շարք զեկուցումներ (նիստի նախագահ* Գ. Գևորգյան*): Առաջին զեկուցողը պ. գ. թ.* Ա. Փաշայանն էր՝ *«Սաուդյան Արաբիան պահպանողականության և արդիականության միջև» թեմայով: Նշելով, որ 2003-ից ի վեր Սաուդյան Արաբիայում մեծ թափ են ստացել բարեփոխումներին միտված գործընթացները, նա նկատեց, որ այդ շարժումը պահանջում է վերանայել երկրի պետական գաղափարախոսության հիմքում ընկած վահաբականության դրույթները որպես առաջընթացը խոչընդոտող ուժ: «Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի ԱԽ-ի (2006–2007 թթ.) ընդունած բանաձևերի շուրջ» խորագրով զեկուցում կարդաց պ. գ. թ.* Գ. Իսկանդարյանը*: Նա հանգամանորեն ներկայացրեց Իրանի Իսլամական Հանրապետության և նրա միջուկային ծրագրի նկատմամբ համաշխարհային հանրության դիրքորոշումներն ու ձեռնարկած միջոցառումները: Ելույթով հանդես եկավ նաև* Դ. Կնյազյանը՝ *«Արտաքին քաղաքականության համաձայնեցման և համադաշնության ստեղծման հարցերը անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. խորհրդաժողովում ու Ադրբեջանի դիրքորոշումը» թեմայով: Ամփոփելով իր զեկուցումը՝ Դ. Կնյազյանն արձանագրեց, որ Անդրկովկասի հանրապետությունների աջակցությունը ստանալու և հետխորհրդային միասնական ճակատ ստեղծելու Ն. Ռուսուբեկովի կառավարության առջև դրված խնդիրը ձախողվեց: Տապալվեց ՀՀ կառավարության հետ քաղաքական համաձայնության գալու փորձը: Այս պայմաններում, երբ կողմերը ոչ միայն ի վիճակի չէին համաձայնության գալու Ղարաբաղի և Զանգեզուրի պատկանելության հարցում, Ադրբեջանը փորձում էր չեղյալ հայտարարել Ադրբեջանի Հանրապետության և Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի միջև 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագիրը, Երևանը Բաքվի հետ քաղաքական գործակցության չէր դիմելու: «Ակադեմիկոս Գր. Ղափանցյանը և Վանի թագավո-*

ության դիցարանի դիտարկումները» խորագիրը կրող զեկուցումով հանդես եկավ Ս. Գրիգորյանը*: Զեկուցողն արժևորեց Ղափանցյանի ուսումնասիրությունները, առաջարկված հիմնավորումները՝ համադրելով դրանք հետագայում մասնագիտական գրականության մեջ արտահայտված կարծիքների հետ: Ս. Գրիգորյանը նշեց, որ Ղափանցյանը առաջինն էր հայ իրականության մեջ, որ ուրարտական դիցարանի դիցանունները բաժանեց 6 խմբի, որոնցից առաջին երեքը՝ արական, մյուս երեքը՝ իգական:*

Լիագումար նիստում եղան ուշագրավ հարցադրումներ ու արժեքավոր դիտարկումներ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ու ժողովուրդների քաղաքական վիճակի, միջազգային հարաբերությունների և արդի զարգացման հեռանկարների վերաբերյալ:

Հունիսի 14-ին գիտական նստաշրջանը բաժանվեց երեք նիստերի և իր գործունեությունը շարունակեց տարբեր դահլիճներում. առաջին նիստում (ինստիտուտի նիստերի դահլիճ, նիստի նախագահ պ. գ. թ. Ա. Փաշայան) ելույթ ունեցավ պ. գ. թ. Գ. Գևորգյանը՝ *«2007 թ. սահմանադրական բարեփոխումները Եգիպտոսում. ժողովրդավարություն թե՞ պատրանք» թեմայով: Նա նշեց, որ վերջին շրջանում գիտական քննարկման առարկա են դարձել արաբական աշխարհում քաղաքական համակարգի արդիականացմանն ուղղված գործընթացները, որոնք շատ դեպքերում ներկայացվում են իբրև ժողովրդավարությանն ուղղված քայլեր, ուստի այս տեսանկյունից զեկուցողն արժևորում է Եգիպտոսի փորձը և փաստում, որ Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը ցանկանում է սահմանափակել «մուսուլման եղբայրներ» առաջատար ուժի մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին: «ԱՄՆ-ի դիրքորոշումը 1975 թ. լիբանանյան քաղաքացիական պատերազմի նկատմամբ նրա սկզբնական փուլում» թեմայով զեկուցումով հանդես եկավ* Ա. Հարությունյանը*: Զեկուցողը նշեց, որ ԱՄՆ–Սիրիա–Իսրայել գաղտնի համագործակցությունը ստացավ «կարմիր գիծ» անվանումը՝ մի չգրված, չստորագրված և Սիրիայի կողմից երդում չտրված համաձայնագիր: Արդյունքում՝ Սիրիան հայտնվեց Լիբանանում առկա «status quo»-ն ու երկրի կառավարությունը պաշտպանողի դերում՝ աջակցություն գտնելով ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից:* Մ. Սաֆարյանը *զեկուցեց «Հարավային Կովկասի նկատմամբ Չինաստանի արտաքին քաղաքական ռազմավարության ուսումնասիրության արդիականության մասին»: Նա նշեց, որ նոր պատմության ժամանակահատվածում միջազգային հարաբերությունների համակարգումը պետությունների անվտանգության վրա ազդող հիմնական գործոններից են եղել ռազմաքաղաքական հզորությունը, մշակութային զարգացման ասպեկտները և տնտեսական ներուժը: Ակնհայտ է, որ Չինաստանը ևս, դառնալով աշխարհի երրորդ գերտերություն, իր մոտեցումները կցուցաբերի աշխարհի գրեթե բոլոր տարածաշրջանների նկատմամբ: 1990-ական թվականների առաջին կեսին ռուս-թուրքական հարաբերություններում առկա լարվածության, ինչպես նաև միջինասիական նորանկախ հանրապետություններում, Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցության թուլացման գործոնից օգտվել ցանկացող Թուրքիայի*

գործողություններին էր նվիրված Գ. Արշակյանի *զեկույցը՝ «Երկնային հոսք» գործարքը որպես ռուս-թուրքական մերձեցման նախադրյալ» խորագրով:*

Գիտական նստաշրջանի երկրորդ նիստը շարունակվեց ինստիտուտի Թուրքիայի բաժնում (նիստի նախագահ՝ պ. գ. թ. Վ. Տեր-Մաթևոսյան*): Նիստի առաջին զեկուցողը* Պ. Չավիկյանն *էր՝ «Հանրապետության նախագահը թուրքական սահմանադրական համակարգում» թեմայով: Զեկուցման մեջ քննվում էր Թուրքիայում 2007 թ. ապրիլ–մայիս ամիսներին տեղի ունեցած նախագահական ընտրությունների քվեարկության առաջին փուլը, որն ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) դիմումի համաձայն անվավեր ճանաչվեց ՍԴ-ի կողմից: Հետաքրքրական զեկուցմամբ հանդես եկավ* Տ. Զաքարյանը՝ *«ԱՄՆ-ի հնարավոր ներգրավումը առաջին աշխարհամարտում 1915–1916 թթ. և Հայոց ցեղասպանությունը» թեմայով: Զեկուցման մեջ նա անդրադարձավ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող հազարավոր հայերի կոտորածին, որին ակնկալվում էր ԱՄՆ-ի՝ իբրև չեզոք պետություններից մեկի եռանդագին միջամտությունը: Այդ օգնությունն իրեն երկար սպասել չտվեց, սակայն բացառապես մարդասիրական ասպարեզում: Ակնկալվող ռազմական ճնշման տարբերակը, որ ԱՄՆ-ը բանեցնում էր աշխարհի այլ մասերում իր նպատակին հասնելու համար, ԱՄՆ-ի կառավարող շրջանների կողմից մերժվեց ի սկզբանե:* Հ. Նահապետյանը *«Միացյալ Նահանգների թուրքական և ադրբեջանական կազմակերպությունների գործունեությունը» զեկուցման մեջ անդրադարձավ Միացյալ Նահանգների կոնգրեսում Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրինագծի շրջանառման պայմաններում ԱՄՆ-ում թուրքական համայնքի և թուրքական լոբիստական գործունեության ակտիվացմանն ու ծավալմանը, ադրբեջանական գաղթօջախի կազմակերպմանը, հայկական սփյուռքի դեմ հակահայկական գործողություններ ծավալող 2002 թ. հիմնադրված ազերիների «Արտասահմանում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային կոմիտե» պետական կառույցի գործունեությանը: Նիստում ուշագրավ զեկուցմամբ հանդես եկավ* Մ. Անումյանը՝ *«Հայոց բնաջնջումը Տրապիզոնի նահանգում տեղահանության ու կոտորածների դատական վավերագրերի համաձայն» թեմայով: Զեկուցման մեջ քննվում էր Տրապիզոնի դատավարությունը, որի ամբաստանագիրն ու դատական նիստերում լսված վկաների որոշ ցուցմունքներ գիտական շրջանառության են դրվում առաջին անգամ: Զեկուցողն իր ելույթում նշեց, որ Տրապիզոնի դատաքննության գլխավոր առանձնահատկություններից մեկը դատարանին գրավոր կամ բանավոր ցուցմունքներ տված վկաների, մեծ մասամբ թուրք կամ այլազգի մահմեդական լինելն էր:*

Գիտական նստաշրջանի երրորդ նիստը շարունակվեց ինստիտուտի Իրանի բաժնում (նիստի նախագահ՝ պ. գ. թ. Գ. Իսկանդարյան*):* Լ. Ստեփանյանը *հանդես եկավ «Դատաիրավական բարեփոխումների ազդեցությունն իրանական հասարակության վրա XX դարի առաջին կեսին» թեմայով: Զեկուցման մեջ դիտարկվում էին XIX դ. վերջին և XX դ. սկզբին Իրանի հասարակական-քաղաքական կյանքի ցանկացած ոլորտում իրականացվող բարեփոխումները, որոնք հանդիպում էին խո-*

չընդոտների երկրում տիրող անօրինականության պատճառով: Այդ ծրագրերը չէին կարող պսակվել հաջողությամբ՝ առանց դատաիրավական ոլորտի բարեփոխումների: Ն. Նավասարդյանը *«Իրանում երկաթուղային շինարարության հարցի շուրջ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)» թեմայով զեկուցման մեջ անդրադարձավ հիշյալ ժամանակահատվածում Իրանում իրականացվող երկաթուղու շինարարության հարցին, վերջինիս հանդեպ Մեծ Բրիտանիայի և ցարական Ռուսաստանի վարած քաղաքականությանը՝ այն գնահատելով որպես «փոխհամաձայնեցված», թեպետ այդ ժամանակ Մերձավոր Արևելքում այդ երկու տերությունների միջև առկա էին տնտեսական, քաղաքական և ռազմավարական շահերի հակասություններ:* Մ. Աբրահամյանի՝ *«Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքականությունը Կասպից ծովի տարածաշրջանում» զեկուցման մեջ քննվում էր հիշյալ տարածաշրջանի աշխարհաքաղաքական կառուցվածքի արմատական փոփոխումը Խորհրդային Միության փլուզումից հետո, որտեղ նոր հանրապետությունների ձևավորումը մեծացրեց այդ տարածաշրջանի նշանակությունը:* Ա. Վարդերեսյանը՝ *«Իրան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից Աբուլֆազ Էլչիբեյի նախագահության շրջանում» զեկուցման մեջ, անդրադառնալով 1991 թ. մարտի 12-ի Ադրբեջանի անկախությանը և այն Իրանի կողմից պաշտոնապես ճանաչմանը, այդուհանդերձ, նշեց, որ Իրանի հարևանությամբ իր անկախությունը հռչակած այդ պետության «Ադրբեջան» անվանումն արդեն իսկ իր մեջ ներառում էր սպառնալիք Իրանի Իսլամական Հանրապետության տարածքային ամբողջականության համար:*

Հունիսի 15-ին գիտական նստաշրջանը շարունակեց իր աշխատանքը ինստիտուտի նիստերի դահլիճում (նիստի նախագահ Հ. Հմայակյան): Լ. Հարությունյանի *զեկուցումն էր՝ «Նախադասության շարահյուսական բաղադրիչների ստորադասական հարադրումը ըստ գերադաս բաղադրիչի* al - ’āmil- *ի ազդեցության»: Զեկուցմամբ նշվում էր արաբերենի խոսքի շղթայում ցանկացած բառի ձևափոխությունը, ըստ արաբական լեզվաբանական ավանդույթի՝ պայմանավորված է որևէ բառով, որը հանդես է եկել նախորդ դիրքում և ընկալվում է որպես տվյալ բառի կառավարող: Այդ դիրքերի հարադրման ամբողջությունը, որը կապված է «գործոն»* ՝al - ’āmil *հասկացության հետ, եվրոպական արաբագիտության մեջ ընդունված է անվանել գործոնների տեսություն: Հետաքրքիր էր* Ա. Փաշայանի *«Արևելցին Աղասի Այվազյանի ստեղծագործություններում» զեկուցումը, ուր հեղինակն անդրադառնալով Այվազյանի ստեղծագործություններում ներկայացված արևելյան նկարագրով կերպարներին՝ առաջին հերթին, թիֆլիսաբնակներին («Արևելյան դուքան», «Կովկասյան էսպերանտո», «Մուխամբազ դուդուկով», «Տաղ ի վերայ Հովնաթանեան գերդաստանին» և այլն), փաստեց, որ Այվազյանը սիրով է հայացք գցում արևելցու վրա: Նրա գործերում նկատվում է հատկանշական կարևոր մի գիծ՝ սերը գեղեցկության նկատմամբ և նրա պահպանումը հավերժության համար, ինչը հստակ արտացոլված է «Տաղ ի վերայ Հովնաթանեան գերդաստանին» պատմվածքում:* Մ. Սիմոնյանը *«Ահմադ Շամլուի պոեզիան» զեկուցման մեջ անդ-*

բաղարձավ արդի պարսից բանաստեղծության ամենաակնառու ներկայացուցիչ Ահմադ Շամլուի ստեղծագործությանը (1925–2000), նրա բանաստեղծական մտածելակերպին: Շամլուի «Ալեֆ Սոբհ» գրական անունը գործածվել է մինչև 1953 թ., այնուհետև նա հանդես է գալիս «Ալեֆ Բամդադ» կեղծանունով: Շամլուն պարսից գրականության մեջ է դրել և կատարելության հասցրել բանաստեղծական կաղապարի մի տեսակ, որը կոչվում է «Սպիտակ բանաստեղծություն»: Սպիտակ բանաստեղծությունը չունի արուզի չափ և բանաստեղծական չափերից ոչ մեկի հիման վրա չի կառուցվում: Շամլուի ստեղծագործություններից նշանավոր են 1960-ական թթ. գրված ժողովածուները՝ «Միդան հայելում» (1964) և «Միդա. ծառը, դաշույնը և հիշողությունը» (1965), որտեղ միջավայրի ստորությունն ու այլանդակությունը միախառնված են սիրո, մաքրության և լույսի, վեհության և ազնվության հետ: Է. Խաչատրյանը *«Ի՛բաբի շրջանակները դասական արաբերենի լեզվաբանական ավանդույթում» զեկուցման մեջ նշեց, որ դասական արաբերենի տիպաբանական բնութագիրն ամբողջանում է թեքման ունակությամբ: Լեզուն մու՛բաբ է, այսինքն՝ փոփոխվող է՝ ըստ թեքման: Դրանում բառավերջի ձայնանշանները փոփոխվում են ըստ բառի արտահայտած քերականական իմաստների: Իսկ Ի՛բաբը քերականական տերմին է. դրա իմաստը մու՛բաբ բառի վերջավորության ձայնանշանի փոփոխությունն է՝ ըստ նրա ուազիֆայի: Ի՛բաբը փոփոխականությունների տեսություն է՝ կապված բառերի փոփոխության հետ: Նիստի վերջում հետաքրքրական զեկուցմամբ հանդես եկավ* Լ. Սաֆրաստյանը՝ *«Կառուցելով տունը երկնքի մեջ». վտարանդիության խնդիրը Գոլի Թարաղիի արձակում» թեմայով: Նա կանգ առավ մասնավորապես մեծանուն պարսիկ արձակագիր Գոլի Թարաղիի ստեղծագործությունների քննության վրա: Նա իրանական գրականություն մուտք է գործել 1960-ականների վերջերին հրատարակելով՝ «Ման համ Չեգևարա» («Ես նույնպես Չեգևարան եմ», 1969) և «Խաբե զեմեսթանի» («Ձմեռվա քունը», 1973) նովելների շարքը: Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո հայտնվելով օտարության մեջ՝ Թարաղին իր հայացքը սևեռեց վտարանդիության խնդիրներին: Հետհեղափոխական տարիներին լույս ընծայված «Խաթերհայե Փարաքանդե» («Ցրված հուշեր», 1990), «Ջայե դիգար» («Մեկ ուրիշ վայր», 2001) և «Դո դոնյա» («Երկու աշխարհ», 2002) պատմվածքների ժողովածուներն առանձնանում են իրենց գաղափարական ուղղվածությամբ, որտեղ հեղինակը պատկերում է հայրենի տնից հեռու, օտարության մեջ բնակվող պարսիկ կնոջ ներքին ցավն ու նոր իրականության մեջ՝ կրոնական, մշակութային, ազգային ինքնությունը պահպանելու նոր դժվարությունները:*

Երկրորդ նիստը տեղի ունեցավ ինստիտուտի Թուրքիայի բաժնում (նիստի նախագահ՝ Ա. Գասպարյան*):* Լ. Հովսեփյանն *իր «Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունն Ադրբեջանի զինված ուժերի բարեփոխումների համատեքստում» թեմայով զեկուցման մեջ դիտարկելով 1990-ական թվականների սկզբներին դարաբաղյան հակամարտության ընթացքում Թուրքիայի ցուցաբերած զգալի ռազմական աջակցությունը Ադրբեջանին, որով բավական մեծ ներդրում է*

ունեցել ադրբեջանական բանակի կայացման գործում, ինչն իր արտահայտությունը գտավ 1996 թ. հուլիսի 10-ին Անկարայում ստորագրված «Ռազմական կրթության, տեխնիկական և գիտական համագործակցության» մասին պայմանագրով: Ա. Կարապետյանը *հանդես եկավ «Քեմալական շարժումը և Թուրքիայի Հանրապետության կայացման փուլերը» թեմայով: Ուսումնասիրելով Թուրքիայում հանրապետական կարգերի կայացման փուլերը՝ զեկուցողը առաջին փուլը համարում է միասնական քաղաքական կազմակերպության մեջ ազգայնական ուժերի համախմբումը, երկրորդ փուլը՝ 1920 թ. ապրիլի 23-ին Անկարայում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հրավիրումով սկսվում է քեմալականների իշխանության իրականացումը և նրանց միջազգային ճանաչումը, և երրորդ փուլը՝ Թուրքիայի Հանրապետության հռչակումը: Այդ զարգացումների մեջ կարելի է տեսնել ոչ միայն պետության կառավարման ձևի փոփոխության, այլև ազգայնական շարժման քաղաքական կազմակերպության՝ պետական իշխանության կենտրոնական համակարգի վերափոխման պետական մի ինքնատիպ գործընթաց:* Մ. Հովհաննիսյանը *«Թեոդոր Հերցլ–Աբդուլ Համիդ հարաբերությունների հարցի շուրջ» զեկուցման մեջ անդրադարձավ սիոնիզմի հիմնադիր Թեոդոր Հերցլին, որը հրեական պետության ստեղծման ծրագրերն իրագործելիս հրեա մեծահարուստներ Մորիս դը Գիրշից և Ռոտշիլդներից, չստանալով դրական պատասխան, փորձում է հրեական պետություն ստեղծելու իր գաղափարն իրականացնել Աբդուլ Համիդի միջոցով: Նիստի վերջում Աննա Պետրոսյանի՝ «Ադրբեջանի զինված ուժերի սպառազինության և արդիականացման հարցի շուրջ» թեմայով զեկուցումն էր, ուր դիտարկվում էին Հայաստանի Հանրապետության համար առաջնային խնդիրներից համարվող Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորումը, ինչպես նաև Ադրբեջանի զինված ուժերի համալրման գործընթացը:*

Գիտական նստաշրջանի եզրափակիչ նիստը տեղի ունեցավ հունիսի 15-ին ինստիտուտի Իրանի բաժնում (նիստի նախագահ Լ. Ստեփանյան*): Առաջին զեկուցողը* Ա. Հակոբյանն *էր՝ «Շիրվան» երկրանվան ծագման հարցի շուրջ» թեմայով: Զեկուցման մեջ քննվում էին «Շիրվան» տեղանվան ստուգաբանության և նրա սկզբնական պատմամշակութային բովանդակության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտված կարծիքները, որոնց հիմնավորվածությունը ճշտելու համար զեկուցողն անդրադարձել էր դրանց փաստարկումներին:* Գ. Միքայելյանը *«Մշակութային հեղափոխությունն Իրանում 1980–1987 թթ.» զեկուցման մեջ անդրադարձավ 1978–1979 թթ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությանը, միապետական վարչակարգի տապալմանը, ինչի արդյունքում ստեղծվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը:* Ա. Պողոսյանը *«Նասր-Էդ-Դին շահի այցը Գերմանիա 1873 թ.» թեմայով զեկուցմամբ անդրադառնալով պատմական այդ իրադարձությանն այն գնահատեց երկու կարևոր առումով, դրանով ոչ միայն սկիզբ դրվեց Իրանի և Գերմանիայի միջև հարաբերությունների հաստատմանը, այլև քաղաքական հետագա զարգացումների ձևավորմանը: Գերմանիայի*

համար Իրանը նախնառաջ շուկա էր սեփական ապրանքների և ապա նոր հող իր քաղաքական ազդեցության համար:

Նույն օրը տեղի ունեցավ նստաշրջանի փակումն ու արդյունքների ամփոփումը: Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ. Սաֆրաստյանը*: Նա նշեց, որ նման գիտական նստաշրջանները լավագույն առիթ են տարբեր գիտական կենտրոնների երիտասարդ հետազոտողների փոխադարձ ճանաչման, մտքերի փոխանակման իմաստով: Այդ առումով Արևելագիտության ինստիտուտի երիտասարդ արևելագետների հանրապետական XXVIII գիտական նստաշրջանը գերազանցեց նախորդին իր թեմաների ընդգրկման լայնությամբ, երիտասարդ մասնագետների ներգրավման, նորանոր ուշագրավ հարցադրումներով: Վերջում բոլոր մասնակիցներին հանձնվեցին վկայագրեր:*

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ